

որը բերդին կից անհրաժեշտ մի կառուցվածք է (և ոչ թե բերդ, ինչպես թարգմանում են ոմանք), կառուցել է Սարգսյու 2-րդը: Այս բոլորը մեկ անգամ ևս ապացուցում են, որ Կարմիր բլուրը իր դիրքով չէր կարող վրիպել Արդիշտի 1-ինի ուշադրությունից: Կարմիր բլուրը մինչև Ռուսա 2-րդը պետք է եղած լինի ուրարտական հռահանգույց բերդերի մի օղակը՝ կապված հատկապես Արինբերդի հետ:

Հիշյալ արձանագրությունների հայտնաբերումը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արինբերդի առաջիկա պեղումների ժամանակ կլուսաբանվեն Հայաստանի նախնական շրջանի պատմության բազմաթիվ մոլթ հարցեր:

(Արտատված «Սովետական Հայաստան» թերթի 1950 թ. հոկտեմբերի 3-ի № 234-ից)

ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐԻ 1950 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և պետական էրմիտաժի համատեղ էքսպեդիցիան, որը պեղումներ էր կատարում Կարմիր բլուրում, ավարտեց իր 1950 թվականի պլանով նախատեսված աշխատանքները:

Էքսպեդիցիայի ղեկավար, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, Ստալինյան մրցանակի լավագույն Ռ. Բ. Պրոտորովսկին այս տարվա պեղումների արդյունքների մասին Հայկական Հեռագրական Գործակալության թղթակցին հաղորդել է հետևյալը.

— Արդեն ինը տարուց ի վեր պեղումներ են կատարվում Կարմիր բլուրում: Անցած տարիների պեղումները ցույց տվեցին, որ այստեղ գտնվում են մեր թվարկությունից առաջ 7-րդ դարի ուրարտական ամրոցի մնացորդները: Բլուրի վրա գտնվող միջնաբերդում, որտեղ ապրել է ուրարտական փոխարքան, պահպանվել են ընդարձակ արհեստավորական շենքեր և մառաններ:

Այս տարի բացվեց գինու մի մեծ մառան, որտեղ գտնվեցին կիսով չափ հողի մեջ թաղված 70 խոշոր կարասներ: Նրանցից ամեն մեկի վրա հիերոգլիֆներով նշված է տարողության չափը: Մառանում եղած կարասների ընդհանուր տարողությունը կազմել է մոտ 70,000 լիտր:

Վերջին երկու տարում հայտնաբերված երկու մառաններում պահպանվել է առնվազն 160,000 լիտր գինու պաշար:

Իր գոյության վերջին տարիներին մեր թվարկությունից առաջ 6-րդ դարի սկզբում, ուրարտական վարչական կենտրոնը տնտեսական անկում ապրեց: Հարկերը կանոնավորապես չէին ստացվում, և միջնաբերդի պաշարները նվազեցին:

Ամրոցի անկումից հետո կարասները դա-

տարկվեցին, նրանք մասամբ լցվեցին հացահատիկով և ալյուրով: Նրանցից մի քանիսի մեջ հայտնաբերվեցին մետաղյա իրեր:

Կարասներից մեկի մեջ, մի խոշոր բրոնզյա կաթսայի տակ գտնվեց Արդիշտի թագավորի սաղավարտը, որը հանդիսանում է ուրարտական արվեստի գեղեցիկ նմուշ: Սաղավարտի վրա կան խորաքանդակ զարդանկարներ: Սաղավարտի վրա պատկերված են սրբազան ծառերի առաջ կանգնած աստվածներ, ուրարտական մարտականքեր և հեծյալ մարտիկներ:

Մի ուրիշ կարասի մեջ հայտնաբերվեցին վահանների միջին մասի բրոնզյա վեց կոնաձև զարդեր, որոնց վրա պահպանվել են արձանագրություններ և ցույցերի ու առյուծների գլուխների պատկերներ:

Մառանում գտնվեցին նաև բազմապիսի առարկաներ՝ առյուծների և ցույցերի պատկերներով զարդարված կապարձներ, գավաթներ, ապարանջաններ, ջուհակային դազգահի հարմարանքներ, եղջերուների սղոցված եղջյուրներ, ոսկրից կերտված այծի գլուխ և ալյն: Հայտնաբերվեցին ուրարտական մի քանի քարե պատկերազարդ կնիքներ:

1950 թվականի պեղումները տվեցին խիստ արժեքավոր նյութեր, որոնք բնութագրում են մեզանից ավելի քան 2,600 տարի առաջ գոյություն ունեցած ուրարտական պատմության կուլտուրան:

Կարմիր բլուրում կատարված պեղումների ամբողջ ժամանակաշրջանում արդեն գտնվել են ուրարտական 140 արձանագրություններ: Հաջորդ տարի պեղումներ կկատարվեն միջնաբերդի կենտրոնական մասում: Պետք է սպասել, որ երևան կբերվեն մեր հայրենիքի հնագույն պատմությանը վերաբերող նոր հուշարձաններ: